Յոր ջերմաջերմ յարտասուս կրկնէր սիրոյն զիւր համբոյր.
"Ընոյշ իմ վարդ, երթ բարեաւ, թող զԱւարայր մեզ ի սուգ,
Զանեմ վերջին զիմ կարօտ ի քո ճակատ վերհաշուք։,,
Այսպէս ողբաց Եղիշէ, այսպէս սգաց դառնագին,
Մինչ զիւր փափաք տայր սիրով ի դիւցազանց սառ շիրիմ.
Բաղցրիկդ իմ վարդ Հայրենեաց, վարդանման քո արիւն՝
Ի սիրտ Հայոց ջերմավառ միշտ ցողեսցի կենդանւոյն։
Ո՜ Շաւարշան, իմ քաջաց ծաղկափթիթ օրօրոց,
Միշտ անմոռաց միշտ անմահ ի քո գրկին գրկե՛ ս ծոց,
Դու և Տղմուտ ի մեզմ ալիս մինչ ծածանիս գեղածուփ,
Պահեա՛ ի քեզ Վարդանայն վարդգեղ արեան կաթիլ սուրբ . . ։

ԱՐՇԱԿ ՎԱՀՈՒՆԻ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ.

ԹՌՉՆԵԱԿՆ ՁԱԳԱԿՈՐՈՑՍ.

Ընդէր տրտում յոստս ծառոց
Նստիս Թռչնակդ սիրասուն.
Ե՛լ երգակցել սիրուն Թռչնոց,
Երգել զգալուստ արեւուն։
Կանխէ՛ի ես, ասէ Թռչնակն,
Եւ երգէի բաղցր ի ծայն՝
Վասելս յայգւոյն վարդամատին
Ցայս ծաղկածին ծառաստան։
Զի յայն նուազ ես մայր էի
Երից ծագուց տարփալեաց,
Եւ փութաջան յօրինէի
Զբոյն իմոցն սիրելեաց։
Ժողովէի կեր բաղցրահամ,
Եւ զերդ նոցա երգէի,
Իսկ զգիշերն համանգամայն
Դաժկեալ թեւօք ննջէի։
Ելանէաք մեք յայգս այգւոյն,
Ցանձին զփոյթ կալեալ ոչ՝
Ի յայգորել մեծի արփւոյն
Ի ճուտոցիւն բարձրադոյ։
Բայց ո՜հ, անգութ եւ անողորմ
Անագորոյն ձեռն մարդոյն . . .
Ցափշտակեաց ի սուրբ գրկէ
Զոմն ի մագուցս սիրասուն։
Եղուկ նոցա որբացելոց
Ցայն գերութեան ի կսկիծ,
Եւ իմ եղուկ բիւր ցաւոց
Ցայս սգալի ի թախիծ։

ԱՌԱՒՕՏ.

Ահա՛ արեւուն ճաճանչ լուսափայլ
Գայ բնութեանս ի տես յանուշիկ ի քայլ,
Բաշխել համայնից հրճուանաց գիմակ,
Զարթիր արդ դու իմ մանուկ սիրունակ։
Ահա՛ յելեւէջս երփնագեղ ծաղկանց,
Ի կանանչաթոյր բողբոջ դալարեաց,
Պճնելոց ի զարդ ցողիւք փայլ ի փայլ,
Ճուտոցեն սիրուն թռչնակք սխրացեալ։
Ահա՛ մեղրահոս ծաւոյն արդասիք,
Զորովք բաղցրաշունչ փարի զեփիւռիկ,
Ի տերեւս վառ փայլին զեղաթոյր
Եւ առծայնեն զմեզ յիւրեանցն ի համբոյր։
Իսկ այն ծաղկաստիւռ առուակն ի կարկաչ,
Ի թաւալ գլոր յահեակն եւ ի յաջ,
Մատռուակ լինի բուսոց եւ տնկոց
Պարուրեալ նոցա ի սքողեալ ի ծոց։
Արդ ել դեղանի մանուկդ յասպարէզ,
Ձեմել ի հրճուանս ի ծաղկունս ի սէզ,
Զփունջս կազմել, երգել ընդ սոխակ,
Տալ փառս Արարչին, լինել զոհունակ։

Թիֆլիս։ Թարգմանեաց Ռ. Էրէնէց
Ց. ՁԱԹԱԼՊԱՇԵԱՆՑ.